

ՄԱՍԻՍ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 9

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ),

3 ՄԱՐՏ 1901

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ ղրԵ. Եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Զրանք կամ 5 բուլլի : Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու , Եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները , ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ Եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն փոյ :

Զեռֆէ կը ծախուի ՀԱՏՁ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՅԷ

در علیہ غلطہ « ماسیس » غزنہ می ادارہ می

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Կ. Պոլիս , Ղալաթիս , Նորաստուկեան իսան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՍԱԳԱՅԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Ղալաթիա, Գուրգուրու խան քիւ 7

Ծաղիկ լրագրի սոյն Տպարանին մէջ խնամով կը կատարուին տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ, — ծանուցումներու, հարսանեկան հրաւիրագիրներու, այցեցեաններու, մահազգներու, առեւտրական շրջաբերականներու, եւայլն, — պատրաստութիւնը, — դիւրամատչելի պայմաններով:

5—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ, Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսին դեմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վեասք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագիրն	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վեասք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրողք **ՁԵՐԾ** են այն վնասներէն եւ լուսախաբուրքիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրուեալմբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— 3 ՄԱՐՏ 1901 —


ԹԻԻ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այցելութիւն մը Ազգ. Հիւանդանոցի Որբանոցին . Թոքախոր խնդիրը . ՄԵՐՍԵՏԵՍ . — Անքակտելի . ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ : — Պատրանք (Բանաստեղծութիւն) Կ. ՈՍԿԵՆ : — Ապրող գիրքերը . ՀԱՐՄԱԿ : — Արճամար-
հալքը (Նորավէպ) Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ : — Բարիգեան Կեանքէն . ՕՐ. Ն : — Յուշատետր :

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ



ԹՈՔԱԽՏԻ ԽՆԴԻՐԸ

Այս պահուստ, ընդհանուր ու ցաւագին հետաքրքրութեան հոսանք մը ուղղուած է գէպի Ազգին Տունը, գրեթէ միակ հաստատութիւնը մեր մէջ՝ որուն ամէն Հայ կապուած է սրտով, եւ որուն գործերուն քիչ մը ամէնքս ալ կը սիրենք հետաքրքրուիլ, մտածելով թէ մեր անանկներուն, մեր հիւանդներուն, մեր անկարներուն ու խեղագարներուն համար անկէ գատ չունինք ուրիշ պատուարան մըն ալ որ պէտք եղած պահուն երկու դուռները մէկանց բանայ մեր առջին : Այդ հետաքրքրութեան պատճառը ծանօթ է ամէնուր . — Տխուր ու գերազանցապէս վրդովիչ նամակ մը՝ զոր Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը Կեդր. Վարչութեան Ս. Նախագահին ուղլած էր, եւ որ հրատարակուեցաւ մեր թերթերուն կողմէ, սա սիրաւ ըզքտող գոյժը կու տար Ազգին՝ թէ իր սիրած Հաստատութեան այն բաժինը՝ որ աղջկանց որբանոցի յատկացուած է, պատուաբաւելներու շնորհով ըլլալուն եւ տեղին անյարմարութեան որտե՛ստ ուր օրէ օր հակառակորդապահիկ հանգամանք մը կը ստանայ, եւ թէ այդ վի-

ճակին շարունակուիլը կրնայ պատճառ ըլլալ որ հարիւր քսան անժառանգ աղջիկներ հիւանդութիւններու ամէնէն ահաւելին եւ ամէնէն անկարելիքին, Թոքախտէն վարակուին : — Եւ ահա այդ նամակին հրատարակութենէն ի վեր, ամէն մարդ իրեն համար մտահոգութեան առարկայ մը գործուցած է խնդիրը, մտածելով թէ երեւակայութիւնք ամէնէն սոսկալի բաներէն մէկը պիտի ըլլար այդչափ քնքայլ ու սիրելի կեանքեր անուղք ու անդարմանելի հիւանդութեան մը մատնուած տեսները :

Հաստատութեան մը մէջ՝ որ ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ աւելի հիւանդներու, ցաւագարներու ու խենթերու միայն յատկացուած է, եւ պէ՛տք է որ յատկացուած ըլլայ, որբերու գոյութիւնը անխմտութեան մըն է ինքնին . աւելցուցէ՛ք ատոր վրայ սա պարագան՝ թէ այդ անոք աղջիկներուն յարկը ուր այսօր հարիւր քսան հոգի պառկելու ստիպուած են, հանգստաւէտ ու առողջութեան անմիտ պատուարանի մը հանգամանքը ունենալու համար պէտք չէ՛ որ յիս-

տունէ աւելի անկողին պարունակէ , եւ այն ատեն կրնաք հասկնալ թէ Հոգաբարձութիւնը որչա՛փ կարեւոր իրողութիւն մը կը ներկայացնէ իր նամակով , եւ թէ որչա՛փ իրաւունք ունի իր այն պահանջումին մէջ , որով կը խնդրէր անմիջական կերպով այդ աղջիկները փոխադրել շա՛տ աւելի հանգստաւէտ ու ընդարձակ տեղ մը՝ ուր կարելի ըլլար անոնց արդէն իսկ տկար առողջական վիճակը պաշտպանել ո՛ր եւ է հիւանդութեան դէմ :

* * *

Կանանց յիմարանոցին դէմը , երկար յարկի մը մէջ ամբոխուած են որը աղջիկները , յանձնուած անձնուէր ուսուցչուհիներու , գրեթէ ամէնքն ալ երիտասարդ աղջիկներ՝ որոնք գլխաւորաբար իրենց տարիքին բերմամբ , աւելի քրօջ մը հանգամանքով ինքզինքնին կապած են այդ պզտիկներուն՝ քան դաստիարակի : Հազիւ մեկնած յիմար կիներու բաժնէն , ուր երեւակայութիւնք ամէնէն խռովոտ եւ ամէնէն սարսեցողիչ աղաղակները սարդի անհատնում ոստայն մը կը հիւսեն բերնէ բերան , տեսակ մը անուշ եւ հանդարտեցուցիչ տպաւորութիւն կը գգանք այդ որբերու յարկին մէջ , ուրիշ ներս մտած պահերնուս սիրուն աղմուկ մը բռնած է չորս դին : Ամէն կողմ խնդուք , ամէն կողմ՝ շաղակրատութիւն , եւ հոս ու հոն պզտիկ , անուշիկ աղջիկներ՝ որոնք անձանթ այցելուներ տեսնելով իրենց մօտ , ժպտուն գէմքով մը եւ նապաստակներու գրգռ վազքով դէպի դասարանները խոյս կու տան՝ իրենց ընկերուհիներուն ըւր տանելու համար :

Դասի ժամն է երբոր կ'այցելենք , ու բոլոր աղջիկները , եւ անոնց հետ ալ քանի մը մանչեր՝ որոնք քիչ մը աւելի մեծնալու պէտք ունին Ս. Յակոբայ որբանոցը փոխադրուելու համար , բաժնուած են պզտիկ դասարաններու մէջ , ունենք նոտած եւ ունենք , — անհանդարտները մանաւանդ , — ոտքի վրայ : Սեւուլիկ , պճլտուն նայուածքով եւ սիրուն ու գրաւիչ դէմքով աղջիկներ են գրեթէ ամէնքն ալ , արեւահար , եւ հագուած միօրինակ գորշուկ շրջագետտով մը՝ որուն կերպասը Ս. Յակոբայ որբերը պատրաստած են :

Բացի մէկ քանինէն՝ զորս բնութիւնը չէ ուզած ո՛ր եւ է ձիրքով մը օժտել , ընդհանուրին աչքերուն մէջ բաւական աչքառու խելացութեան մը արտայայտութիւնը կը տեսնուի . շաշուն խօսուածք մը ունին ամէնքն ալ , ու քիչեր կ'անճրկին հարցումի մը սատասխանը տալու առթիւ : Չէք կրնար երեւակայել թէ մարդ որչա՛փ մեծ հաճոյք մը կրնայ գգալ այդ աղուորիկ պէսէքներուն դասաւորութեան ներկայ գտնուելով : Երեւակայեցէք պտղտիկ աղջիկներ , որոնց ձեռքին երբեմն կաւիճի կտորն իսկ ծանր կու գայ , եւ որոնք սակայն գրաւաւորաւորին առջեւ կանգնած , բաներ մը կը չարտեն , երբեմն թիւերու պարզ գումար մը եւ կամ տող մը գիր , միւս կողմէ ալ իրենց բրածը բացատրելով . երբոր հարցումին պատասխանը չի շփոթեցնէր զիրենք , կը բացատրեն աւանդ վարանելու , հրապուրտ ու սիրուն խօսուածքով մը , իսկ երբ չեն կրնար գտնել այդ սատասխանը , ան ատեն անուշիկ նայուածք մը կը ձգեն վրադ ու չրթունքնին կը փոթփոթի պզտիկ տղու ժպիտով մը՝ որ շատ ետքը միայն կ'անհետանայ :

Կարգաւ կ'այցելենք բոլոր դասարաններն ալ . միշտ նոյն գրաւիչ խումբերն են ամէն տեղ , միշտ նոյն անուշիկ պճլիկները , ունենք գոռու , սեւ մազերով եւ ունենք խարտեալ , ամէնուն մէջ ալ հետաքրքիր նայուածքներ կ'ողջունեն մեզ , աչքեր՝ որոնց մէջ եփեխտի սեւ : կը խաղտի , աչքեր որոնք ապակիի պէս կը վառին՝ եւ ուրիշներ ալ որոնց մէջ երկինքին լուրթը կը լողայ : Ամէն անգամ որ դասարանէ մը դուրս կ'ելլենք , ճառուողիւնը որ մեր մուտքին պատճառաւ կը դադրէր՝ կը վերսկսի շա՛տ աւելի մեծ թափով մը , ու տակաւ կը տարածուի մեր թողած բոլոր դասարաններէն ներս , եւ երբ դասարաններէն կը բաժնուինք , կրկին մթնոլորտը լեցուած կը գտնենք այն սիրուն աղմուկով՝ որ ներս մտած ատեննիս բռնած էր չորս դին , ճիշտ ինչպէս որ անտառի մը երախները բռնուած կ'ըլլան առտուան կարմրուկ արեւածաղը ողջունող թռչուններու երգերէն :

Ու թերեւս ամէնուրեք համար վերջին ծայր միտքարական ըլլայ սա յայտնութիւնը , թէ

այդ անուշիկ տրարածներուն մէջ քիչեր միայն մեղաւորագոյս են, եւ թէ բնդհանուրը կ'անցնէ տղու այն անգիտակից գուարթ ու անհոգ կեանքը՝ զոր ամէնքս ալ ապրած ենք, եւ որուն անուշութեան բնաւ չենք կրնար հանդիպիլ կեանքին միւս շրջաններուն մէջ:

Դուրսը, զրան մօտը անոնցմէ հատ մը կը գտնեմ, ամէնէն գեղեցիկներէն եւ ամէնէն խելացիներէն մէկը. կը կեցնեմ զինքը քանի մը հարցում ընելու համար: Չգիտեմ թէ որի՞նչ է կամ է. կը խնդայ, գոհ է իր վիճակէն, իր առած սնունդէն, օրիորդներէն՝ որոնք զինքը չին պատժեր, վերջապէս ամէն մարդէ: Խօսած տատենիս, գրպանէն թաշկինակ մը կը հանէ, եւ անոր մէկ ծայրէն երկու կտոր չաքար առնելով, տղոց յատուկ կոտորուքով մը մէկը ինծի կ'երկնցնէ: Կը մերժեմ, բայց կը պնդէ, կ'ուզէ որ անպատճառ տանեմ: Կ'արելի՞ է չընդունիլ. կ'առնեմ չաքարը ու փոխանակ բերանս դնելու՝ կ'աշխատիմ իրեն կերցնել. սակայն ժամանակ չի ձգեր, սատանորդի նայուածք մը կը նետէ վրաս, ու շաշուն քրքիչ մը թողած կը փախչի, ամէն մէկ քայլին ետին դառնալով: Ու մինչեւ որ չաքարը բերանս չեմ դնէր, դատարանէն ներս չի մտնէր:

* * *

Դատարաններէն դուրս ելլելէ անմիջապէս ետքը կ'այցեւիչեք որբերուն ննջարանը. եւ այն ատեն միայն կը գգամ թէ ինչո՞ւ Հիւանդանոցի Հոգարարձութիւնը այնչափ ստիպողական հանգամանք մը տուած էր իր պահանջումին. երեւակայեցէք որտէ՞ մը, մէկ ծայրէն միւսը անկողիններով լեցուն, բոլորն ալ մաքուր ու կոկիկ, բայց ամէնքն ալ իրարու քով. նեղ անցք մը միայն կայ մէջտեղը՝ երթեւեկի համար. անկէ դուրս, անկողիններու բացուած քներէն պղտիկ տղաքը միայն կրնան անցնիլ, եւ ան ալ բաւական դժուարութեամբ:

Միտքերնուդ առջեւ բերէք անգամ մը թէ այդ աստիճան խճուղուած որտէ՞ մը ինչ կրնայ ըլլալ գիշերը. խեղճ տղաքը ստիպուած են գրեթէ բերան բերնի պառկիլ այդ իրարու կպչած անկողիններուն մէջ, չորս հատ, վեց հատ, տասը հատ քով քովի, եւ

այն տեսակ մթնոլորտի մը մէջ, որ բնականաբար պիտի ապականուէր հարիւրէ աւելի տղոց շունչէն: Հետեւա՞նքը. . . , հիմա կ'արելի՞ է կասկածի տակ ձգել սա պարագան թէ այդ աստիճան անյարմար վայրի մը մէջ թոքախտը կրնայ անխուսափելիօրէն տարածուիլ, — ինչպէս որ օրինակը տեսնուեցաւ արդէն, — եւ թէ թոքախտին հետ միեւնոյն ատեն կրնան տարածուիլ կարգ մը ուրիշ հիւանդութիւններ ալ՝ որոնք համեմատաբար նուազ ահուելի ըլլալուն՝ այն աստիճան աչքի չեն զարներ:

Բայց աղջկանց որբանոցին այդ հակառուջապահիկ կացութիւնը չի նշանակեր թէ թոքախտի կատարեալ համաճարակ մը տարածուած է այս պահուս որբուհիներուն մէջ, ինչպէս որ ջանացին կարծեցնել ունեք: Այդ տեսակ հրատարակութիւններ օգուտ մը չունենալէ զատ՝ պատճառ եղան որ սխալ մեկնուի Հոգարարձութեան նամակը, եւ աննպաստ տարածայնութիւններ չըլին Հիւանդանոցին նկատմամբ, այնպէս որ մայր մը, այդ հրատարակութիւններէն ազդուած, իր զաւակը առեր տարեր էր, չնայելով որ Ս. Յակոբայ մէջ պատասպարուած է ան եւ ո՛չ թէ Հիւանդանոցին:

Եւ սակայն, Հոգարարձութիւնը բնաւ համաճարակի մը գոյութիւնը չէր յայտարարած իր նամակին մէջ. հիմնուելով թոքախտի պարագայի մը վրայ, եւ հիւանդութեան իրր միակ պատճառ նկատելով որբերուն մաքուր մթնոլորտի մը եւ աւելի հանգստաւէտ վայրի մը մէջ չապրիլը, զգացնել ուզած էր թէ «թոքախտը հետզհետէ ճարակելու երկիւղ կ'ազդէ աղջկանց սրբանոցին մէջ»: Այս պահուս արդէն, թոքախտէ բռնուած ոչ մէկ որբ կայ Հիւանդանոցին մէջ. համաճարակը չէ՞ որ տիրած է հոն, այլ հեռանկարը միայն այդ համաճարակին, որ կրնայ ժամանակ անցնելով իրականութեան փոխուիլ, եւ որ այսօր ահարկու պատռնալիք մը դարձած է նոյն յարկին գլխուն: Որբերը Հիւանդանոցէն դուրս, որբերը աւելի ընդարձակ ու առողջ տեղ մը, եւ այն ատեն այդ սպառնալիքը ինքնին կը կործանի, ու կ'անջքանայ հիմէ զուրկ շէնքի մը պէս՝ զոր առաջին համը կրնայ գետին գլորել:

ԱՆՔԱԿՏԵԼԻՆ

Որչափ ալ խորը երթանք մարդկային քաղաքակրթութեան ամենաստորին օթեաններուն, այիտի տեսնենք թէ ամուսնութիւնը այն առաջին գործն է, զոր երբեք կրօնքը օրէնսդրած ըլլայ ընտանեկան յարկին տակ : Հետեւաբար մենք որ այսօր ամուսնութեան խորհուրդին կը զուգակցենք ընկերական դաշնագրութիւնը, չպիտի կրնանք անոր մէջ զուտ կրօնականէն տարբեր տարր մը մտցնել, երբ ինքիբը ամենահին ժամանակուան մարդկութեան շուրջը դառնայ :

Գերազանցապէս կրօնական էին հիները, իրենց կրօնքի բոլոր տարօրինակութիւններով, քանի որ այսօր վաղնջական ըմբռնումներու հետքերը կը հաստատեն, թէ նոյն իսկ ընկերակցութիւնը, ընտանիքը, ընտանիքին վառարանը, ծնունդները, գերեզմանը, ստացութիւնները, ժառանգորդութիւնը եւայլն, կը հովանաւորուէին օրէնքով մը, որ ուղղակի եւ միմիայն կրօնքէն կը ծնէր : Ֆրանսիայի «Cité antique»-ը թերեւս ըլլայ ամէնէն կուռ ու ամէնէն ամիստի հաւաքոյթը, որ կարող ըլլայ մեզի տալ այս ճամարութեան անհերքելի վկայութիւնը :

Նախնական ժողովուրդներու այդ կրօնականի համադրութեան մէջ, կարելի չէ պահ մը կանգ չառնել կէտի մը վրայ, որ շատ մը ուրիշ սովորոյթներու եւ ըմբռնումներու հետ անզգալարար միասնացում է մեզի, քրիստոնեաներու :

Այդ գիտումած կէտն է ամուսնութեան ինքիբը :

Վաղնջական ժողովուրդներու մէջ ամուսնութիւնը կաղմաստական պէտքէ մը տեսիլ, կրօնական հարկաւորութեան մը վրայ հիմնուած է, ու պարտաւորիչ հանգամանք մը ունի ամէնուն համար : Յունական եւ Հռոմէական օրէնքները խստիւ արգիլած էին ամուսնութիւնը, որ ընտանեկան կեանքին թելը կը մկրտէր : Եթէ սերնդագործութեան նիւթական չքացումը ըլլար միմիայն ամուսնութեան արգիւնքը, թերեւս օրէնսդիրները չի

խորհէին իսկ անոր վրայ, Բայց կրօնական տեսակէտով, ընտանիքի մը սերնդական չքացումը ուրիշ բան չէր, եթէ ո'չ ընտանեկան պաշտամունքին (culte) անէացումը : Եւ պէտք չէր որ չքանար ընտանեկան վառարանին պաշտամունքը, երբ անդին՝ մեռնող նախնիք, ընտանիքին աստուածացած թերափները, իրենց գերեզմանին մէջ կը սպասէին յաջորդող սերունդներուն գինեծօնին եւ ընծայարեութեան : Զաւակը իր անձին աչքը չէր, եւ չէր կրնար ալ ըլլալ, նախորդ եւ յաջորդ սերունդներու համար միութեան գիծ մըն էր անիկա, եւ եթէ երբեք չմտածէր իր անմահութեանը վրայ, պարտաւոր էր գտնէ խորհիլ իր ունեցած պարտքին՝ բոտ որում իր նախնեաց իրաւունքն էր պահանջել իրմէ, որպէսզի իրենց պաշտամունքը յաւերժացնող արու սերունդ մը թողու իրմէ վերջ, ինք որ այդ պաշտօնին համար աշխարհ բերուած էր իր ծնողքին կողմէ : Այս պարագային մէջ, մարդ նոյն իսկ իր անձնական իրաւունքէն ալ՝ այսինքն անմահանալու գաղափարէն ալ՝ չպիտի կրնար ձեռք քաշել, քանի որ անդրաշխարհի մէջ անունդի անհրաժեշտ պէտքը պիտի հոգացուէր ընտանիքին մէջ յաւերժացող սերունդով : Եւ ահա այս պատճառաւ ամուսնութեան արգիւնքին կից կընթանար ամուսնալուծութիւնը ա'յն պարագային, որ կին մը զաւակ չի ծնիր իր պատկանած վառարանին : Որքան սրտաշարժ է Հռոմէական տարեգրոյց մէջ յիշատակուած առաջին կնաթողութիւնը, որուն համեմատ «Կարվիլիոս Ռուգա ամուսնալուծումով բաժնուեցաւ իր կնիկէն, անկէ զաւակներ չկրնալ ունենալուն համար» : Նա խանդաղատանքով կը սիրէր իր կնիկը, բայց իր սէրը զոհեց երգման կրօնին, որովհետեւ երգում բրած էր (ամուսնութեան բանաձեւով) թէ «Կանի կին կառնուր, անիկ զաւակներ ունենալու համար» : Ուրիշ ամէն պարագայի մէջ՝ գէթ ամենահին ա

տեղները՝ ամուսնալուծութիւնը բացարձակապէս եթէ ոչ արգիլուած, գէթ չգործադրուած իրաւութիւն մըն էր :

Ամուսնալուծման անհնարութիւնը, այդ ժամանակներուն մէջ, կրօնական գաղափարէ մը յառաջ եկած սկզբունք մըն էր : Տունին համար հայր մը ու մայր մը պէտք էր, սերնդագործութեան անհրաժեշտութենէն կը ծնէր այդ պէտքը : Երբ ծնողք այդ պէտքը լեցնելու Ֆիզիքական կարողութիւնը ունէին, ալ ուրեմն ուրիշ խորհելիք մը չէին կրնար ունենալ : Հայր, մայր, մանչ գաւակ, տհաճ երեք եզրերը որոնք զիրար կը լրացնէին ընտանեկան վառարանին պաշտամունքին մէջ, որուն նուիրուած ծիսական պաշտամունքը, աղօթքի բանաձեւերը, ուրիշներէ գաղտնի կը պահուէին, եւ իրր անբռնաբարելի սեփականութիւնը, թաքուն ստացուածքը կը մնային նոյն վառարանին : Ամուսնալուծութեան սկզբունքը կրնար վտանգի ենթարկել ընտանեկան վառարանին պաշտաման գաղտնութիւնները, եւ ասանկով ո՛չ միայն պղծել այդ նուիրական վառարանին գոյութիւնը, այլ եւ խռովել հանգիստը տանը աստուածներուն, որոնք այդ տունին երէկի պապերն էին, հիմա հողերուն տակ աճիւնացած, միշտ կենդանի, միշտ պահանջկոտ, ու միշտ ակնդէտ իրենց սերունդներու կողմէ տրուելիք նուէրին :

Մարդկային պատմութեան այն շրջանին մէջ, ուր կրօնքը՝ առանց հասարակաց մեհեաններու եւ աստուածներու՝ կը սահմանափակուէր ընտանեկան աստուածներու թուիքին մէջ, եւ կը զանազանուէր՝ ծէսով ու երգերով՝ խրաքանչիւր ընտանիքի համաձայն, ամուսնութիւնը՝ կրօնքի այդ ցայտուն լծորդութիւնը, կ'աստուածանանար մարդկայնութենէն բոլորովին դուրս ելած : Ու այդ տարրողութիւնը՝ գէթ աղջկան համար՝ կեանքի բացարձակ փոփոխում մը յառաջ կը բերէր : Ամուսնացող աղջիկը, իր ամուսնութենէն առաջ պէտք էր ազատագրուէր իր ծնողքի աստուածներու պաշտամունքէն, ու պէտք էր որ մասնաւոր գոհով մը, եւ որոշուած աղօթքի բանաձեւով մը տունին հայրը վերջնապէս իր աղջիկը հրա-

ժարեցնէր իր հօրենական տան պաշտամունքէն, որպէս զի անիկա կարող ըլլար երթալ պաշտելու իր ամուսնին կրօնը, որուն աստուածները մինչեւ այն ատեն անծանօթ էին իրեն : Ասկէ որոշ կերպով կը տեսնուի, թէ ամուսնութեան առաջին պայմաններէն մէկն էր՝ աղջկան համար՝ կրօնափոխութիւնը (եթէ կրնանք այսպէս կոչել զանի) : Այդ արարողութենէն վերջ, երբ աղջիկը կ'առաջնորդուէր իր նշանածին տունը, կը ներկայացուէր նոյն ընտանիքին աստուածութեան, նուիրական կրակի սեղանին առջեւ, աղօթքները կը բանաձեւուէին, եւ երկու ամուսնացողները հաց մը կը բաժնէին իրարու հետ : Երկուքին կողմէն ձօն մը, աղջկան համար նոր այդ ընտանեկան աստուածութեան ուղղուած, կը լրացնէր իրենց ամուսնութեան խորհուրդը : Հիմա նոյն էին իրենց աստուածները, հիմա նոյն էր իրենց կրօնը, հետեւաբար ամուսնացած են օրինապէս :

Կրօնի եւ աստուածներու նոյնութեան մէջ կատարուած ամուսնութիւն մը, ա՛լ չի կրնար մարդկային ո եւ է միջամտութիւն ընդունիլ : Մարդ չէր կրնար այդ պսակը սարքել իրով : Հետեւաբար մարդ չպիտի կրնայ քակել այն կապը, զոր աստուածները զուգեցին : Այս տեսութիւնով՝ շատ աւելի մեկին եւ շատ աւելի բանաւոր պիտի ըլլար քրիստոնէութեան դաւանանքը, թէ «զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեացէ» :

Ամէն դաւանանք ու ամէն վարդապետական ըմբռնում կրնայ իր գոյութեան իրաւունքը պահել մինչեւ այն ատեն, երբ անոր ծնունդ տուող պարագաները կամ ազդակները կը չարունակեն իրենց դերին մէջ : Քրիստոնէական ու վալնջական ամուսնութիւններուն միջեւ երեւան եկող պարագաներու տարբերութիւնը կը ցուցնէ, թէ ո՛րքան բարեջրութիւն յառաջ բերուած է մեր մէջ, ու հիմա ամուսնութիւնը կրօնական ո՛ր եւ է հրաժարում, ո՛ր եւ է ազատագրութիւն չի պահանջէր ամուսնացողներէն, ու հիմա, ամուսնութիւնը ընտանեկան վառարանի մը պաշտամունքին եւ մեռած հայրերու գոհաբերութեան մը գաղափարին արգասիքը ըլլալէ հետեւ, մարդկայնացած կալուածի մը մէջ կը

կատարէ իր նոյն իսկ կրօնական սեպուած արարողութիւնը , մարդկային վիճակներու դէմ յանդիման , մարդկային պաշտօնէի ձեռքով : Հիմա շատ սրտ կերպով կրնանք տեսնել , ուրեմն , թէ քրիստոնէութենէն հաշարաւոր դարեր առաջ հոգիներուն ցունց տուող եւ կրօնական անհրաժեշտ պայմանը սեպուող «զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեցէ»ն, դարերու խորէն կը սպրդի կանցնի լպրծուն սողունի մը պէս , գալ մեզի հասնելու հա մար : Բայց անկեա մեզի կը հասնի իր ետեւը մոռցած զինքը ծնցնող պարագաներն ու աղ զակները : Այդ առանձնակ հատուածը չի նմանիր ա՛յն փաստաբանին , որ ճամբայ եւ լած ատեն տունը կը մոռնայ իր դատաւա րութեան պատկանող պաշտօնագրերը եւ իր փոխանորդագիրը : Աստուծոյ կապածը , մարդ չի կրնար քակել , Աստուծոյ մը ձեռքը միայն բաւական պիտի ըլլայ իր շինածը խանդարեւ լու : Այս համոզումին առջեւ ամէնքնիս գլուխ կը ծռենք , նոյն իսկ կամաւ անտեսեւ լով այն սրբագրութիւններն ալ , զորս մար դուն ձեռքը այնքան բարերարօրէն կ'ընէ բնութեան տգեղութիւններուն վրայ : Բայց միեւնոյն ժամանակ մարդն ալ , իր դիրքին , իր միջավայրին , իր ուժին ու կարողութեան համեմատութեամբ բան մըն է , կարող իր դործերը սրբագրելու , եւ եղծելու իր ստեղծածը : Այս պարագային մէջ , ուրեմն , «զոր Աստուած զուգեաց»ը վաղնջականութեան բաժինը կը մնայ յաւէտ , ցորչափ մեզի հա մար՝ ամուսնութիւնը մարդկայնացած արաւ րողութեան մը սահմանը կը գծէ , իր գրու թեամբ ու իր արդի ըմբռնումներով :

Մեկնութեան փորձ մըն է ասի , աւելի ճիշտը նախափորձ մըն է , զոր ուղեցինք հիւ նի ու նորի զուգադրութիւնով մը երեւան բերել , չեշտելու համար սա պարագան թէ , մենք որ մեր նախահաւերէն ժառանգութիւն ներ բերած ենք , մենք՝ չենք կրցած մեր այդ ժառանգութեան ամբողջութեան ըմբռնումը ունենալ : Վարդապետութիւններու մշտու ներ , ծէսերու կոտորուքներ , արարողու թիւններու բեկորներ անյիշատակ ժամա նակներէ անցած միջոցին , իրենց մեծա գոյն բաժինը կորուսած , հազիւ աննշան մա

սերով եկած մտած են մեր ըմբռնումներուն մէջ : Ու մենք հետզհետէ լուսաւորուած մեր գաղափարներու յաւաքյաղացութիւնով , տեւ սած ենք մեզի հասածներուն թերին , պա կառ , ուզած ենք լեցնել զայն , բայց մեր գործը միշտ անջատ , առանձին մաս մը կաղ մած է հին—ամբողջին ծոցը : Ամուսնութեան անհակսեղին ալ , մեր մէջ , այդ կարկանդակ հնութիւնն է , իր վաղնջականութեան արժէ քէն բաւական բան կորուսած , զինքը ստեղծող պարագաներուն եւ աղջակներուն հետ , երբ մանաւանդ այսօր , նոյն իսկ ամուսնու թեան fondը , յատակագիծը , բացարձակ խո տորնակութիւնով մը կը սեւագրէ ամբողջ չէնքին կազմութիւնը , քանի որ՝ նոյն իսկ հակառակ հինին՝ հիմա , մեր միեւնոյն կրօ նային օրէնքով տղան է որ ծնողաթող պիտի ըլլայ , փոխանակ հին ատեններու աղջկան կրօնափոխութեան :

Գրիտոնէութիւնն ալ galanterieն իր հի մերէն մէկը կը դառանի լուեւայն , իր ազա տագրած կին արմատին հանդէպ : Գէթ այս պէս ցոյց կուտայ ամուսնական խնդրոյն մէջ «Թողցէ այր զհայր իւր եւ զմայր , եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ» բացօրոյ պատուիրանը :

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ


ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ազգ. Պատրիարքարանի երկու յարգելի Դիւանա պետներ՝ Բարթող Էֆ. Թեւեան եւ Կարապետ Էֆ. Խա շատուրեան՝ ինչպէս 1900ին , ներկայ շրջանին համար ալ մէյմէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեցին Հաճրէի եւ Սիսի Որբանոցներուն :

Նոյնպէս Սեւանիկէն զրասեր ազգային մը՝ Յարու րիւն Էֆ. Աճէմեան՝ անցեալ տարուան պէս՝ այս շրջա նին համար ալ նուիրեց տարեկան մէկ օրինակ Մասիս Մարկարայի ազգ. վարժարանին :

Այս նուիրատուութեանց բարոյական նշանակութիւնը մանաւանդ , որ համակրանքի ու գնահատման նշան մըն է Մասիսին նկատմամբ , շնորհակալութեան պարտք մը կը դնէ Խմբագրութեան վրայ :

Առիթէն կ'օգտուինք յայտարարելու համար քե գաւառային աղքատ դպրոցներէ խնդրանքներ կ'ուղղուին մեզի շարունակ՝ որպէս զի ձրիաբար Մասիս դրկուի իրենց՝ իրրեւ մտաւորական հասնելի ու օգտակար ժա մանց մը բարձրագոյն կարգի քիչ շատ ազգացած ա շակներուն համար : Որքափ որ կը ներքն բերքիս ներքական համեստ միջոցները , գոհացում տուինք այս խնդրանքներէ մէկ քանին . բայց կարելի չըլլալով ա մենուն հասնիլ , զրասեր ազգայիներու բարեսացակամ ուշադրութեանը կը յանձնենք՝ այս ընթերցասեր բայց աղքատիկ դպրոցականներուն փափաքը :



Հիւանդ պառկած եմ տենդահար,
Լեցուն ճակատըս քրտինքով,
Ցաւերու կրակ անկողնիս քով
Կը հսկէ դեմք մը բոր, նինար:

Ձեռք մը ջրդուտ ատեն ատեն
Կը սեղմէ ձեռքըս տոբորոդ,
Մարմինս ամբողջ կը ցնցէ դող,
Ու ցընորք միտքըս կը պատեն:

Ու կերագեմ խելակորոյս:
Այն վշտահար դեմքը ցամաք՝
Որ կը ծըռէր վրբաս, հիմակ՝
Կը փոխուի վարդ դեմքի մը լոյս:

Ձեռքն որ սարսուռ կու տար ձեռքիս՝
Կակուղ, փափուկ ձեռքի փոխուած՝
Կը հովանիէ ճակատս այրած,
Որ զով առնու ցամաքած հոգիս:

Ու երագոտ կը խորհիմ ես,
Ապահով ան է, սիրուհիս,
Որ խընամել եկեր է գիս,
Անոյշ, զըթած հրեշտակի պէս:

Յանկարծ պաղած ձեռքիս վրբան
Կաթեցաւ տաք բան մը հալած,
Աչքըս բացի, դեռ շմորած,
Աստուած իմ, մօրս արցունքն էր ան:

Մայր իմ, ով մալը իմ, պաշտելիս,
Սնու է եղեր սէրն աղջկան
Աչքը խարոզ, լեզուն դրութան.
Դո՛ւն, միայն դուն կը սիրես զիս:

Գ. ՈՍԿԵԱՆ

Ա Պ Ր Ո Ղ Գ Ի Ր Ք Ե Ր Ը



Մէկը երբ ուզէ գիրքերու աշխարհին մէջ
Զըջագայիլ, պիտի տեսնէ հոն կեանքի բոլոր
Ելեւէջները իրենց լայն արտայայտութեամբը:
Բայց զգուշաւոր քայլերով պէտք է յառաջա-
նալ այդ գետնին վրայ՝ որ համասեռ բաղկա-
ցութիւն մը չունի:

Գիրքերու հսկայ դէզ մը, առաջին անգամ
կը ներկայանայ քեզ, բազմակերպ եւ այլա-
զան, որուն առջեւ պահ մը կը շփոթի միտքդ:

Սակայն անխռով մօտեցիր անոր, վասն զի
ամբողջովին անկենդան աւերակոյտ մը չէ ան,
այլ թղթեղէն բարդութիւն մը, ուր, իրաւ է,
միտած՝ դեղնած թուղթերու ահագին քանա-
կութեան մը կը հանդիպիս. բայց ի՞նչ օգուտ
այդ հնամի բեկորներէն, մինչ անդին հոգիացած
թերթեր կան, որոնց էջերուն վրայ կը զգաս
ապրուած կեանքի սարսուռը, որ կ'անցնի հո-
գիդ եւ կը խանդավառէ զքեզ:

կենդանի գիրքերն են անոնք, թանկագին ծրարները մտքի եւ սրտի գանձերուն ա՛յն մարդոց, որոնք խորին գիտակցութեամբ մը ապրած են կեանքը :

Ո՛րքան նոր եւ ընդարձակ հորիզոններ կը բանան անոնք մեր առջեւ : Ի՞նչ անոնք յաւ-գումներով կը լեցուինք, երբ հանդիսատես կ'ըլլանք գաղափարներու եւ զգացումներու փոխանակութեան, անոնց զարգացման դիմա-յեղումներուն՝ ժամանակի երկարածիք գծին վրայ, հուսկ յետոյ՝ սրտագին բերկրանքով մը ողջունելու այն գրիչները որոնք ճշգրիտ եւ արտայայտիչ պատկերացումով մը ներկա-յացուցած են մեզի մտքի եւ սրտի չարժանի այդ կանոնաւոր յառաջնադարացութիւնը :

Այսու հանդերձ, փորձ եւ անկեղծ առաջնորդներու կը կարօտինք՝ օգտակար ընե-լու համար մեր պտոյտը, գիրքերու այդ ան-հուն տարածութեանը վրայ :

Միթէ ամէն մարդ, գիրքերու գաղտ-նիքները վերլուծելու բանալին ունի՞ իր ձեռ-քը : Այսպէս, երբ կը մտնենք հնախօսութեան կալուածին մէջ, եւ ինքզինքնիս բազմախառն տեսարանի մը առջեւ կը գտնենք, իմաստա-սէր պատմագէտին պարտինք գիմել՝ լըյսի ճաճանչ մը սահեցնելու համար իրողութիւն-ներու այդ հոծ եւ ստուերամած շեղակոյտին վրայ, որպէս զի կարենանք խելամուլի հո-սանքին իմաստին, նշանակելով միանգամայն անոր արագութիւնը : Իմաստասէր մատենա-գիրը մտքի աներեւակայելի արագ թռչնէր ունի. օժտուած է ան մոգական ակնարկնե-րով, որոնցմով մէ՛կ անգամէն ամբողջ դարեր կ'ընդգրկէ իրենց խիտ բովանդակութեամբը, եւ որուն իմացական շողերուն առջեւ՝ զոր-մանալի թափանցկութիւն մը ունին անցեա-լին մռալ թանձրութիւնները : Մտքի այդ խո-յանքին մէջ գերազանց կը հանդիսանայ Թէն, որ իր ճոխ եւ հրաշալի երեւակայութեամբը գիտէ անցեալի սփիւնէն արտակիտել որ եւ իցէ ժամանակաշրջան մը, վերաշինելով ա-նոր պատկերը՝ կենդանի եւ նկարէն, ուր կը խորհին եւ կը զգան նոյն ատենի մարդիկ : Ու ընթերցողը որ յանգգաստից անցեալին մէջ փոխադրուած է՝ իմաստասէրին այդ ուժգին սլացքին հետ, ինքն ալ, ինքնամոռացումով

մը՝ պահ մը այդ մարդոց կեանքը կ'ապրի : Բայց գիտութեան ուղիները, ընդհակառակը, հարթ եւ լուսատու են. բաւական է որ քեզ առաջնորդող գիտունը մանուկի մը խոնարհութիւնը ունենայ, եւ չմոլորեցնէ զքեզ իր դրութեան (système) մանուածոյ բա-ւիղներուն մէջ : Որովհետեւ գիտութեան դաշտը անսահման է, դրութիւնը ինքնին հա-կասութիւն մըն է հոն. եւ մէն մի գիտուն՝ իր հանձարին ուժովը կրնայ ընդարձակել իր տեսութեան հորիզոնը, բնութեան նոր նոր գաղանիքներ կորզելով :

Իսկ երբ տեսնուի եւ անհամբեր՝ բանաս-տեղծութեան շրջանակին մէջ կը նետուինք, յուզումներու, համակրութիւններու, գեղեց-կութիւններու, խօլ երազանքներու հնչտին ծիւնք մը ընդհուպ կը գդուէ զմեզ չորս կող-մէն : Ասոնք ամէնքը, սակայն, միջոցին մէջ կը ցնդին՝ եթէ երբեք սիրտերնուս մէջ չեն հանդիպիր լարերու, որոնք միաձայն ներդաշ-նակութեամբ մը կարենան թրթռալ՝ խառնուե-լով անոնց հետ :

Բանաստեղծութեան միայն կ'ապրին այն տողերը, ուր բանաստեղծը կը սարսույց իր ստեղծումին մէջ եւ կ'այրի իր բոցէն : Կար-դացէք Վ. Հիւկոյի՝ Wille-Quierէ ներշնչուած արտայայց տողերը, որոնք աննման գեղեց-կութիւն մը ունին, ուր բանաստեղծը իր մեծ վիշտը — զուկններուն կորուստը կ'օղբայ : Իսկ այն զուտ գեղարուեստական արտադ-րութիւնները, որոնք միմիայն արտաքին երե-ւոյթին հաւատարիմ ցոլացումներն են, ուր արուեստագէտին ինքնութիւնը ոչինչ մըն է. այո՛, այդ նրբակերտ շէնքերը՝ եթէ լայն եւ խորունկ գաղափարի մը կամ հզօր զգացումի մը վրայ չեն խարսխուիր, չեմ կրնար ըսել, թէ մարդոց ապագայ դատաստանն ու ճա-շակը ո՛րքան պիտի ուզէ երաշխաւորել յա-րատեւութիւնը եւ կեանքը ատոնց, որոնք «փայլ մըն են առանց ջերմութեան, եւ հըն-չուս՝ մը՝ առանց թրթռումի» :

Արդարեւ, իրերու մանրամասն թուար-կումը չբաւեր ազդելու համար մեր վրայ, այլ տակաւին սկտք է տաք շունչ մը, բա-նաստեղծին կորովի տեսողութիւնը, որ մեր մէջ արթնցնելով իրերուն կենդանի տեսիլը՝

առաջնորդէ զմեզ յստակատեսութեան: Կ'ապրին ուրեմն այն գիրքերը, որոնք հրապուրիչ են եւ ինքնաբերաբար կը կարգացունին: Անոնք ո՛չ միայն մտերիմ բարեկամներն են ընթերցողին, այլ նաեւ գործօն, ընկերային էակներ՝ իրենց խորհուրդներովը եւ անկեղծութեամբը: Անոնք ամէն մարդու հետ կը խօսին եւ հասկնալի են ամէնուն:

Ո՞վ կը պատրաստէ սակայն այն փափուկ եւ աղնիւ մետաքսը, որով հիւսուած են այդ յաւերժական մատեանները: Պատասխանը շատ պարզ է. — այն ներշնչեալները, որոնց հոգիները յատկութիւնը ունին իրենց վառարանին վրայ ժողովելու անհուն տիեզերքէն արձակուած ճառագայթները, ցոլացնելով զանոնք ըւրր երանգներով:

Հետագայ տողերը մէկ հրաշալի էջը կը ներկայացնեն ներհուն խորհոյի մը եւ ինքնատիպ արուեստագէտի մը հոգիին, որ ապրող գիրքերու հոյլ մը թողուցած է: Սա է անոր ըմբռնումը գիրքի մը մասին: — «Հեղինակը ըսելիք մը ունի, զոր կը համարի օգտակար եւ ճշմարիտ կամ փրկարար ու գե-

ղեցիկ: Դեռ մէկը ըսած է՝ զայն եւ պիտի չըսէ. նա պարտի ըսել զայն անոյշ օծութեամբ մը եւ յատուկ կերպով: Նա կը նկատէ թէ իր կեանքին գումարութեանը մէջ՝ ա՛յդ բանը կամ իրերու ա՛յդ հոյլը միայն, բացայայտ կերպով, իրրեւ ճշմարիտ ծանօթութիւն եւ պատկեր երեւցած է իրեն: Պիտի փափագէր յաճտ կայրայել զայն, եւ եթէ կարելի ըլլար, փորագրել ժայռի մը վրայ՝ ըսելով. Ա՛ւստիկ լուսագոյնը իմ անձիս կամ կեանքիս. եթէ կայ բան մը ինձմէ՛ որուն յիշատակը կ'արժէ պահել, ա՛յս է. — ի՛նչ ալ ըլլայ ճշմարիտ ներշնչումը իր մէջ, իր գրուածը, իր նկարագրութիւնն է այն»: — Ահա՛ կենդանի գիրքը

Արմաշ

ՀԱՐՄԱԿ

ԵՂԻԱ ԷՖ. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԷՆ ԽՈՐՐ, որուն գեղեցկահիւս ու քանաստղածական յօդուածը այնքան հաճոյքով կ'արգացուցաւ այս էջերուն մէջ, ՌԷԹԷՆՍ ԷՖ. ՊԷՐՊԷՐԵԱՆ ԵԱ, ընդունելով խմբագրութեան հրաւերը, իր աշխատակցութիւնը կը նուիրէ Մատիւին, առաջին անգամուան համար զրկելով մեզի՝ զրական խնդրին վրայ տեսութիւն մը, աւելորդ է ըսել քէ ձեռնհասօրէն գրուած, զոր պիտի հրատարակենք յաջորդ քիւով:

ԱՐՀԱՄԱՐ ՀԱՆՔԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Պոլիս աղջկանց բարձրագոյն վարժարանէ մը իր վկայականը ստանալէ ետքը, Սիրանոյշ ա՛լ եկեր էր ապրիլ հոս, գիւղը, հօրը քով՝ որ քաղաքապետական բժիշկ էր: Տխուր մարդ մըն էր բժիշկը, առաջին զաւկին ծնունդին ատեն կորսնցուցած էր կինը, միակ աւարածը զոր սիրած էր աշխարհի վրայ: Այդ մահէն յետոյ աշխարհէն քաշուած՝ գիտութիւնն ու իր աղջիկը ունեցեր էր իրր սիրոյ առարկայ եւ վերջնոյն դաստիարակութիւնը իրր մտահոգութիւն: Եւ սրպէս զի հեռու ըլլար աղմկալից ու յուզումնալից կեանքի մը ձանձրոյթներէն եւ իր գիտական ուսումնասիրութիւններուն մէջ կարենար ընկղմիլ անվրդով,

կամովին ինքզինքը ենթարկեր էր գիւղի ճրգնաւորական կեանքին՝ որ այնքան յարմար էր իր վշտաբեկ ու առանձնասէր մարդու հակումներուն:

Տօքթորին աղջիկը — ինչպէս կ'անուանէին զինքը գիւղին մէջ — տասնութը տատարեկան խանդոտ աղջիկ մըն էր, խարտեաչ, կապուտաչուի, նուրբ ու ջղուտ: Իր զիմագծերուն վայելչութեան ու բարեձեւ հասակին նրբութեան շատ լուկերթային այն համարձակ ու անկեղծ շարժումքն ու խօսուածքը սրոնք՝ գիւղին մէջ, սիրուն ու ընդօրինակելի նորօրինակութեան մը հրապոյրը ունէին:

Այս առաջին անգամն էր որ Պոլիսը կը թողուր ան, Պոլիսը՝ որուն ընկերական կեանքին մէջ չազատուած, անոր անընական ծեք-ծեքումներէն քշուած էր անգագալարար ու իւրացուցած գանոնք՝ հակառակ իր զարգացածի արհամարհոտ վերաբերումին դէպ ի սնտոի պերճանքը : Իրեն համար, մանաւանդ գիւղ գալէն ի վեր, միայն Պոլիսը կար բաղ-ձացուած երջանիկ կեանքի մը իրականացման յարմար առաւելութիւններով օժտուած միջավայր : Առաւելութիւններ՝ որոնց զարմանքով կը տեսնէր թէ պէտքը չէին զգար գիւղին մէջ՝ երջանիկ լրջաւ համար : Ու գիւղի կեանքի նիւթական տափակութիւններուն, տգեղութիւններուն նկատմամբ իր զգացած արհամարհանքն վրայ կը բարդուէին գաւառական ընկերային կարգ ու սարքերու եւ պատշաճութիւններու նախնականութեան ու կոշտութեան թողած անհամ տպաւորութիւնները : Իր կարծիքով, կեանքը գիւղին մէջ հաստատուած էր շատ դրական ու կոշտ լմբռնումի մը հիմերուն վրայ : Բոլոր այս կանխակալ համոզումները արտաքին յարաբերութիւններէ հեռու մնալու պատճառ դարձած էին իրեն :

Մինակ բարեկամուհի մը ստացեր էր ան, Պոլսուհի մը՝ որ գիւղին մէջ ամուսնացած էր Բարեկամուհին գիտէր աղջկան հակումները ու գիտմամբ կը կատակէր անոր հետ, խօսելով իրեն պէս, գիւղը ամուսնանալու կարելիութեան վրայ : Այդ մտածումը կը բռնկեցնէր աղջիկը՝ որ ամէն անգամ յանկերգի մը պէս կը կրկնէր. « Գիւղը, ոչինչ, ոչինչ կայ իմ բաղձանքներուս համապատասխանող, միջավայրը շատ տափակ, ուղեղները շատ անձուկ են հոս » : Բարեկամուհին՝ որ գաւառի յատկանիշները կամովին իւրացուցած էր տակաւ ու կեանքը ըմբռնած իր շատ իրական գոյներով, մայրական ներող ժպիտով մը կը պատասխանէր իրեն, ժպիտով մը՝ որ կ'ուզէր ըսել թէ ատոնք կանխակալ կարծիքներ ու մտածումներ են, տպագային փոխուելու րնգունակ : Եւ Սիրանոյ՝ հասկնալով ժպիտին նշանակութիւնը. — « Ոչինչ, ոչինչ կայ » — կը կրկնէր վճռաբար :

Աղջկան այս խօսքերը արձագանգ գտեր էին գիւղի երիտասարդներու բերնին մէջ,

որոնք կը զգային այն խոր արհամարհանքը զոր ունէր անկա իրենց միջավայրին ու իրենց համար :

* * *

Տօնի գիշեր մըն էր. դրացիի մը տունն էին դացած անունի շնորհաւորութեան : Ագգականներ ու բարեկամներ լեցուած էին սենեակի մը մէջ՝ ուր անկիւնէն պահ մը ծերի մը հին զուարճալի պատմութիւնները մտիկ ըրեր էր ամէն ոք : Յետոյ գինիի ափսէին երթեւեկութիւնը տաքցուցեր էր գլուխները, երիտասարդներ, աղջիկներ կը պարէին կարգաւ. կիներ կը խորախուսէին պարողները, երգողները : Վերջապէս մէկն էր գաւառի այն զուարթ ձմեռ գիշերներէն՝ որոնց յիշատակները կը տեսնէին ամբողջ տարի մը գիւղացիի երեւակայութեան մէջ եւ որոնց վերյուշումը ամէնէն անկեղծ հաճոյքը կը պատճառէ անոր, մանաւանդ ամառուան գործի տենդոտ օրերուն :

Բժիշկը մէկ երկու հատ ճնկած էր՝ տանախորձ կեանքին խմած ըլլալու համար, ու թօթափած քիչ մը իր լրջասու լուծեան հակումները՝ երիտասարդներու խումբէ մը շրջապատուած կը խօսէր եռանդով : Երիտասարդները կը թուէին զինքը հասկնալ կատարելապէս, ու կարծիքներ կը փոխանակուէին գիտական, ընկերային ու գրական հարցերու վրայ : Տոքթորին աղջիկը իր սովորական հետաքրքրութեամբ հեռուէն կը ջանար հետեւիլ խօսակցութիւններուն ու հետզհետէ կը պատէր զինքը ճամբիտ պակուցում մը՝ զոր չէր կրնար ծածկել : Գիւղին մէջ սա իր արհամարհած երիտասարդներն էին ատոնք՝ որ ելեր էին, իր հօրը, զարգացած մարդու մը հետ, խելք հասցնելու այնպիսի բաներու՝ որոնց գաղափարը չէր յուսար թէ գիւղացի ուղեղի մը մէջ այցելած ըլլար :

Անոնցմէ մէկը մանաւանդ շատ ծանօթ դէմք մը ունէր իրեն համար, Երուանդը, որուն անունն ալ սորված էր սպասահարար, եւ որուն ամէն իրիկուն կը հանդիպէր ամառը պտոյտի լայն ճամբուն վրայ, գեղեցիկ ձիւ մը վրայ հեծած բարեձեւ ու հպարտ : Այն օրը երբ պատեհութիւնը ունեցեր էր անոր վրայ ուշադրութիւն դարձնելու, յաղթ

ու համաճափ մարմինն վրայ գտեր էր ոսկեգոծ գոյնով առնական գեղեցիկ գլուխ մը, եփենսոսի սէս սեւ, ժայլուն մազ ու պիտերով : Հիացում մը պատեր էր զինքը հանդէպ այն կորովի ու գեղեցիկ արտայայտութեամբ երիտասարդին, այն հիացումներէն մէկը զոր կը զգայ մարդ վայրի ընտելեալ անարուեստ գեղեցկութիւններուն առջեւ : Ու ցաւ մը զգացեր էր ներսի դին, խորունկ ցաւ մը որ այդ սիրուն գլուխին մէջ պարապութիւն մը կար՝ անասունի, արտի, այգիի, խանութի ու շատ շատ գեղջկական ներքին գործերու դէզ մը ոչնչութիւններով խճողուած : Ու չիրնալով հիմայ աղջկութիւնը չարտայայտել, կը մօտենար խումբին, կարծես աւելի մօտէն ստուգելու համար թէ այն գեղեցիկ գլուխն մէջ գեղեցիկ գաղափարներ ալ կային :

Երուանդն էր խօսողը հիմայ. եռանդոտ ու սահուն լեզուով մը բաղդատութիւնը կ'ընէր մեծ կեդրոններու եւ գաւառի կեանքին. կը համեմատէր երջանիկ անհատներուն թիւը քաղաքին ու գիւղին մէջ ու վերջինին կեանքը, իր պարզութեան մէջ աւելի յարմար կը հետեւցնէր ընտանեկան բարօրութիւնը իրականացնելու : Կ'երեւակայէր գեղջկական, այսինքն աւելի կամ նուազ նախնական ընկերային կեանքի մը բարեշրջումը՝ հեռու արտաքին շեղեցնող, այլասերող ազդեցութիւններէն եւ կը յանգէր եզրակացութիւններու որոնց մէջ կը պարզուէին շատ լայն ու երջանիկ հորիզոններ : Կը խօսէր ան ճամբարտապէս նոր ու առողջ սկզբունքներու վրայ հիմնուած կուռ տրամաբանութիւններով՝ որոնց ամէնքը հաւանութիւն կուտային :

Կարծես երիտասարդը զիտմամբ խօսակցութիւնը դարձուցեր էր այս խնդիրներուն վրայ, անուղղակի կերպով հասկցուցած ըլլալու համար աղջկան այն սխալ ու մակերեսութային գաղափարները զորս լսելի էր թէ իրացուցած էր ան՝ գաւառի ու Պոլսոյ կեանքին տարբերութեան նկատմամբ :

Ու իր խանդավառութեանը մէջ չա՛տ, չա՛տ հեռուները գնաց հետաքրքրական պէս պիտութիւններ գնելով իր խօսակցութեան մէջ, մինչ անդին կը վերջանային պարերը եւ կը լսուէին մնաք բարովի ձայներ : Կը մեկնէին :

Տուն վերադառնալէ յետոյ, ամբողջ գիշերը անկողնին մէջ անքուն տապալակած ատեն, աղջիկը յիշեց երիտասարդին խօսքերը, եզրակացութիւնները որոնք մէկ հարուածով տապալէր էին իր կազմած կարծիքները գիւղին ու գիւղի կեանքին վրայ, զգացեր էր իսէպաներուն հասարակ անձկութիւնը եւ համոզուեր թէ քաղաքի կեանքը ու գիւղի կեանքը գրեթէ հաւասարապէս կը գտնուէին, ընտանիքին երջանկութեան տեսակէտէն, միեւնոյն աստիճանին վրայ :

Յետոյ անդրադարձաւ սղուն ներդաշնակ ամբողջութեան, խորհեցաւ իր անխելք ու կանխակալ արհամարհանքին վրայ ու չմտաւ հեռու ինքնին խոստովանելու թէ համակուած էր այդ երիտասարդով, ինչպէս անոր գաղափարներովը եւ թէ վերջապէս կը սիրէր Լըօրէն կը սիրէր այդ գեղացի տղան, ինչպէս պիտի սիրէր նաեւ գիւղը, գիւղի կեանքը :

* *

Տասնութը տարեկան աղջկան առաջին տէրն էր ասիկա՝ լուռն ու պահանջկոտ՝ որուն բոլոր կիւլէն վերջ տնկարելի էր իրեն սպասողական դիրք բռնել :

Համարձակ ու անկեղծ ռոճով նամակով մը պարզեց իր սիրտը երիտասարդին, հիացում յայտնելով նաեւ անոր վրայ՝ որ գիւղին անկիւնը կրցեր էր զարգանալ այդ աստիճան :

Երուանդ սկիզբէն կուահած էր աղջկան այս տրամադրութիւնները : Սքանչացած էր անոր համբաւուած նրբամտութեան, համարձակ ու անկեղծ վարմունքին վրայ, ու թուոված էր զինքը այն ճաշակը որով գիտէր ան իր վրայ ներդաշնակօրէն պատշաճեցնել գեղեցկանալու արուեստին նրբին սիրունութիւնները եւ երազկոտ աչքերուն ու խարտեաչ մազերուն քնական սիրաւէտ արտայայտութիւնը :

Անդին ուրիշ մէկը կար սակայն, գեղացի աղջիկի մը, պարզ, զուարթութեամբ ու կեանքով առիւ, անկեղծ ու անրիժ, Երուանդ կը սիրէ՞ր զայն : Միայն սա գիտէր թէ իրենց նայուածքները համակրանքի հաստատական պատասխանը իրարու տուած էին շատոնց, ու այդքան միայն : Կրնային ա՛լ կասկածիլ

իրարու վրայ, երբ գեղացիի բերաններուն մէջ արդէն տեսակ մը նուիրագործում ստացեր էր իրենց ապագայի միութեան այդ տարւոյում կապը:

Սիրանոյշի նամակը սրտին մէջ փութորիկ մը կը յարուցանէր: Վճռական բառ մը արտասանած չէր իրօք գիւղացի աղջկան մասին: Կը զգար այն առաւելութիւնները զորս ունէր Սիրանոյշ իր զարգացած աղջիկ: Երկուքին բաղդատութիւնը կ'ընէր իւրովի: Իրարու վրայ ունեցած առաւելութիւնները կը կշռէր միտքով, ու այն ատեն երբ միտքը կը հակէր Սիրանոյշին՝ յանկարծ կը ցցուէին սոջեւր անոր արհամարհանքը գիւղի մասին ու բաղձանքները՝ սրտնք դիւղի մէջ յագեցնալու բնոյթը չունէին: Եւ որովհետեւ թեթեւ սէրերու տրամադրութիւններէն հետու էր իր սիրտը բոլորովին ու իր կողմէն տրուած պատասխան մը վերջնական ու վճռական պէտք էր ըլլալ, երկար ու լուրջ խորհրդածութիւններէ ու իր սրտին ճշմարիտ ու անկեղծ հակումները ճշդելէ յետոյ միայն պատասխանեց:

Երկրայութիւններու տատանում վիճակի մը տառապանքները յոգնեցուցեր էին Սիրանոյշը՝ որ ամէն օր Պոլսեցի մտերմուհիին կ'երթար հազարդել իր մտահոգութիւնները պատասխանի յապաղումին նկատմամբ, ու խոստովանիլ սիրոյ բուռն այրումը իր կուրծքին տակ:

Այս վիճակը շարաթէ մը ի վեր կը շարունակուէր, երբ առտու մը Սիրանոյշ խուփեց բարեկամուհիին սենեակէն ներս, նամակ մը ձեռքին մէջ: Ու անոր հարցական նայուածքին պատասխանելու համար, առանց նախնական բացատրութիւններու, հազիւ կարենալով զսպել արցունքը, «Ա՛հ, ըսաւ, շատ փափկութեամբ հասկցուցեր է ինծի թէ գիւղացի աղջկան տալ նախընտրել է իր սիրտը»: Եւ շարունակութեամբ կարդալով նամակին. «Մտքի ընկեր մը չսխալիր կրնայ ըլլալ անիկա, գիտեմ, բայց սրտի ու կեանքի՝ ամէնէն անկեղծ ու անձնուէր ընկերը, թէեւ զուրկ բարձր իտէալներէ. բայց այսչափը բաւական չէ՞, Օրիորդ, այս մեր գիւղի անհրապոյր կեանքը կարենալ ապրելու համար երջանիկ, խաղաղիկ, հեռու քաղաքակրթութեամբ կեանքերու բազմապահանջ անհրաժեշտութիւններով ծանրաբեռն երջանկութեանէն, անփակ հորիզոնի մը ու պզտիկ բոյնի մը մէջ քիչով գոհ, աւելիին ու մանաւանդ աւելորդին անգիտակից»:

Ու շեշտելով կծու հեգնութիւնը այդ տողերուն. «Ա՛հ, զո՛ւրկ բարձր իտէալներէ... կրկնեց Սիրանոյշ, իմն էին անոնք, բայց չգիտեմ թէ հասկցած եմ անոնց հասարակ ըլլալը: Առջի արհամարհանքս այսպէ՞ս պէտք էի քաւել» հոծեց կոկոսներուն մէջէն արցունքոտ դէմքը թաշկինակին մէջ թաղած:

ՎԱՅՍՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մակարա

ԲԱՐԻՁԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Սաստիկ ցուրտ կ'ընէր քանի մը օր անաչ, եղանակին մշուշը պատած էր երկինքը, տունը փակուելու համար շատ տխուր օր մը: Աւելի լաւ էր երթալ Պոլս առ Պուլսներ, դիտելու չմշկողները: Նկարներու մէջ շատ տեսնուած են այս կարգի տեսարաններ, բայց կենդանի պատկերը հետաքրքրական է առաջին անգամ, ու կը գգացնէ թէ որչա՞փ առողջարար է սոյն մարզանքը: Մեծ լիճը որուն վրայ սովոր

բարար հաղուագիւտ տեսակ բաղեր ու սագեր, ծառերուն հովանիներուն ներքեւ կը վազեն, իրենց նետուած հացի պատառները կուլ տալու — սառած էր, մակոյկները որոնք ամառը փափագողները կը պտտցնեն կամ կամուրջով մը իրարու միացած երկու կողմերէն երբեք երեսի վրայ քով քովի չարուած, բեռնաւորուած էին ծածկոյթներով: Ու հազա-

բաւոր երկսեռ չմշկողներ , մինչեւ իսկ կրօնա-
ւորներ , այդ կանանչ սառոյցէ գետնին վրայ
կը սահէին , խաղեր կ'ընէին , պիսիքեթներու
վրայ հեծած կը վազէին , տարիքոտները պըզ-
տիկ կառքերու մէջ կը քշուէին : Հայր , մայր
չմշկելով կը քշէին մանկիկներով բռնցած ա-
թոռակներ , Յոգնողները սառոյցին վրայ շար-
ուած աթոռներու վրայ հանգիստ կ'առնէին ու
երբ կը քալէինք այդ սառոյցին վրայէն , կըզ-
գիններու չըջանը կ'ընէինք , կամուրջին տակէն
կ'անցնէինք , երազի մէջ ճամբորդութիւն ընողի
մը ազդեցութեան ներքեւ էինք , զարմանալով
որ ոտքերնուս տակի ցամաքը հեզուկի չի
փոխուիր . բայց վախ չկայ , պահապանները
կը հսկեն . միայն պզտիկ անկիւններ ահագին
ծանուցումներ կը կարդանք « Հոս վտանգաւոր
է » : Իրաւ ալ մութ անկիւն մը բաց է այն-
տեղ ուր թռչունները ապաստանած՝ մարդոց
հետ խաղերու մրցում կ'ընեն ու կը հիւսնանք
ժողովուրդին ժրաջանութեանը վրայ որ ամէն
բանէ օգուտ քաղել գիտէ : Այս patinageը
թէպէտ բաց օդի մէջ քանի մը օր միայն կը
տեւէ , որչափ ատեն որ սառած մնան լիճերը ,
(սառնց հաշուելու միւս չմշկելու արհեստական
վայրերը ուր դաս առնելու կ'երթան տիկիներնե-
րը) , բաւական խեղճերու օգտակար կ'ըլլայ խո-
շոր vestiaireներ շինուած են վճարողներուն
համար , երկայն սեղաններու վրայ շարուած
են անհամար patinներ . ոտքերնիդ եղբքը
դնելուդ պէս քովերնիդ կու գան « Կուգէ՞ք
հաս մը , չափազանց զուարճալի է » . երբ
չնորհակալ ըլլաք ըսելով թէ չմշկել չգիտէք
« Մենք հետերնիդ մարդ կը դնենք , տեսէք ,
որչափ գիւրին է , եթէ դասատուներու եր-
թաք , շատ սուղ վճարել կու տան , մինչդեռ
մենք , եւլն . » ու կը շարունակեն նոյն բանը
ըսել ուրիշներու : Յետոյ կան արհեստաւոր-
ները իրենց գործիքներով ու աթոռներով ,
վայրկենապէս շինելու համար կոտորած , աւ-
րուած patinները : Մէջտեղն են ալիւղները
որոնք երկաթին հետզհետէ դուրս հանած ձիւնէ
փոշին կ'աւելն , միւս կողմէ ձեռքերնին եր-
կընցնելով չմշկողներուն որ ամէնքն ալ բան
մը կու տան : Լեցուն են՝ տեսակ տեսակ կար-
կանդակներ վաճառողները , ու ըճակին չուրջը
հարիւրաւորներով կ'երթան , կու գան կամ կը

կենան տունի կառքեր , օդուօպիկներ . ո՞վ
կը մտածէ թէ ձմեռուան ցուրտ ու տխուր
օր մըն է : Արդէն Բարիզցիք ու կարծեմ բո-
լոր Ֆրանսացիք նեղանալ չեն գիտեր : Ուրախ
ծնած են , ամէնէն ծանրաբարոյ մարդիկն ալ .
յուրջ խօսակցութիւն մը իսկ զուարթ ոճով
համեմել կը սիրեն : Այն մարդոց որոնք կատա-
կաբանութեան չեն հանդուրժեր , ծուռ աչքով
կը նային , իբր չար մէկու մը :

§ Օրինակ մը իրենց կեանքէն : Արուեստա-
հանդէսին , երբ Ֆրանսայի քաղաքապետնե-
րուն քսան-քսան երկու հազարը (ամէնը 36
կամ 38,000 են) Բարիզ եկան , իրենց ի պա-
տիւ տրուած հոյակապ հացկերոյթին ներկայ
ըլլալու , որուն մանրամասնութիւնները օրե-
րով զբաղեցուցին տեղական մամուլը , էլի-
զէի մօտէն դիպուածով անցած պահուս ,
հանդիպեցայ այդ քաղաքապետներու ստուար
խումբին որ մաս մաս Դիւլերբիէն էլիզէ
կու գային , Հանրապետութեան նախագահին
ներկայանալու : Ֆրանսայի քաղաքներուն ,
գիւղերուն , մինչեւ քսան բնակիչ ունե-
ցող աւաններուն ներկայացուցիչներն էին ,
Փրախով , Ուրսէնկոթով , պրուսներով , կամ
պարզ հագուստներով , քահանաներ ալ կը
գտնուէին անոնց մէջ , Շատերը զարմանալի
ղէմքեր ունէին , գիւղացիի այրած մարթով
մարդեր՝ բարձր առաքիճանէ անձնաւորութիւն-
ներու հետ : Տեսնելու էր ի՞նչ ուրախութեամբ
երիտասարդներն ու մանաւանդ ծերերը կեր-
գէին , արձակուրդ ընող դպրոցականներու
զուարթութեամբ , գաւազաններնուն ծայրը ան-
ցուցած իրենց գաւառին անունը : Քաղաքա-
պետ մը նայելով կիներու խումբերուն պո-
ռաց . « Կեցցե՛ն մայրերը (mère-maire) ու կի-
ները հրճուանքով իրարու կը խնդային այս
բառախաղին վրայ . — Sont-ils rigolos ! »

§ Այսպէս զուարթութիւն կը գտնէք ամէն
կարգի մէջ , Քաղաքը ամբողջ կարծէք ստեղծ-
ուած է մարդը զուարճացնելու համար : Տա-
րօրինակ ծանուցումներ ու շարքութիւննիդ կը
գրաւեն , մանաւանդ Մօնմարգրի կողմերը
Butte sacrée ըսուածը , իբր թէ մտաւորա-
կաններու յատկացուած , — պատկերահաններու ,
արձանագործներու , կարգ մը բանաստեղծնե-
րու սիրական թաղը որ իր մանաւոր լեզուն

ունի, գրական argot մը որ Լառիվ է Ֆլէօրիի քերականութիւններուն մէջ չի սորվուիր բայց ստրածուած է քաղաքին ամէն դասին մէջ. թեթեւ մը, լրագիրներուն մէջ իսկ սպրդած է ու նորաձեւութեան կարգ անցած է ուսանողներուն մէջ :

Այս բլուրին կատարը, իր սրբագործութիւնը, կը բարձրանայ Sacré Cœur, Բարիկ եկեղեցիներուն ամէնէն ահագինը, կրանիդի ու մարմարիոնի կուտակումով, հազար եկեղեցական լամբարներով, որ վիշեց հոթը տարիներէ ի վեր կը շինուի ու դեռ լորովին աւարտած չէ : Մինչեւ 1901 յունուարին 35,090,000 Ֆր. ծախսուած է՝ գրած էին այս եկեղեցիին շինութեան համար : Այսպէս հակասութիւն կը զգաք ամէն բանի մէջ. Անլուր փարթամութեան քով՝ անօթի մեռնողը, խելայեղօրէն զուարճացողին մօտ՝ քարերու վրայ աղօթքով մաշողները, կեանքերին

հիւանդներուն զոհողները : Մարդկութեան պարծանք բարձր իմացականութեանց մօտ ամէնէն գծուած հաշիւներ ընողները :

§ Պ. Նոպել մեռեր է ու իր հնարած պատեւրագական գործիքներէն վաստակած միլիոններուն մէկ մասը կտակեր է երկու հարիւր հազարական Ֆրանքի մրցանակներ հաստատուելու այն անձներուն համար որոնք ամէնէն շատ նպաստած են խաղաղութեան գործին : Բայց որովհետեւ առաջուց մէկուն միտքէն չէր անցնէր որ այդ տեսակ կտակի մը նախապատրաստուի, կտակակատարները մեծ փնտռութիւն մէջ են կտակէն օգտուողներ գտնելու համար : Առ այժմ, մէկ հոգի մը գտած են որ ամբողջ կեանքը այդ գաղափարին նուիրած է. ու Պօէրնիերուն պատերազմին սկիզբը շատ լրջութեամբ դրեր է եղեր Վիքթորիա Թագուհիին որ զազրեցնէ Թրանսվալի պատերազմը :

Ն.

ՄԱՍԻՍԻ Ե ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Պատրիարքարանի քննիցն նորոգութեան ու ներքին կահաւորման պէտքը, որ տարիներէ ի վեր կը զգացուէր, վերջապէս կը լրացուի Օրմանեան Ս. Պատրիարքին օրով, որուն գիմուսներուն վրայ՝ քանի մը բարեւէր ալկալիքներ յանձն առած են նուիրել 500 ոսկիի, եւ թերեւս աւելի գումար մը, որպէս զի Պատրիարքարանի Սնտուկին վրայ բեռ չըլլայ : Այս երկու շարթի որ բրիչի առաջին հարուածը արուեցաւ՝ ճարտարապետ Գ. Մելիտոսեան էֆ.ի հսկողութեան ներքեւ : Ընդունելութեան դահլիճը բոլորովին պիտի նորոգուի ու կահաւորուի պատշաճապէս : Կրօնական ժողովին համար, որ այդ սրահին մէջ կը գումարուէր մինչեւ հիմա, մասնաւոր սենեակի մը պիտի յատկացուի : Առաջին սանդուխին վրայ գտնուող շէնքը վար պիտի առնուի եւ վարդապետներու յատուկ սենեակներ պիտի շինուին՝ որպէս զի հիւր վարդապետները պիշեւելու տեղ ունենան :

Հիւանդանոցի Տեղեկագիրը. — Ստացանք «Տեղեկագիր Հոգաբարձութեան Եջտի Գուլէի

Աղգ. Հաստատութեան (Ս. Փրկիչ) — 1899 յունուարէն 1899 զեկտեմբեր 31 » որ ամէն մանրամասնութիւններով կը ներկայացնէ այդ հաստատութեան վիճակը՝ բժշկական, դրամական, ուսումնական, արհեստական եւ ուրիշ տեսակէտներով : Թէ՛ Հիւանդանոցի Հոգաբարձութեան եւ թէ՛ անոր բժշկական մարմինն պատիւ բերող այս աշխատասիրութիւն արժանաւոր էլ մը նուիրելու համար Մասիսի մէջ, խնդրած ենք մեր աշխատակից Տ. ք. Յովսէփ Էֆ. Տէր-Ստեփանեանէ (Պարտիզակ) որպէս զի հաճի ուսումնասիրութեան մը առարկայ ընել զայն, մասնաւոր բժշկական մասը, որուն կատարեալ ձեռնհասութիւն ունի իրրեւ գրչի տէր Բոհիչ :

Ճշմարիտ առաստաճեւունքեան մը լուրը կը հաղորդեն Բարիզէն Բիզանդիոնի : Պ. Աղեքսանդր Մանթաչեանց, մեծահարուստ Ռուսահայը, 400,000 Ֆրանք նուիրեր է՝ «միմիայն իր սրտէն խրատուելով»՝ կէսը հայ եկեղեցիի մը յատուկ հոգի մը գնման եւ կէսը՝ շէնքին կառուցման յատկանալի, Բարիզի լաւագոյն պողոտաներէն մէկուն վրայ :

Թոքախտը Որբանոցին մեջ . — Քաղ. Ժողովի այս ուրբաթ օրուան նիստին մէջ է որ նկատողութեան կ'առնուի Հիւանդանոցի Հոգաբարձութեան պատասխանազիրը՝ վարչական ծանօթ որոշման եւ Հոգաբարձութեան ուղղուած հրաւերին առթիւ : Նոյն նիստին մէջ նկատողութեան կ'առնուին նաեւ Նպաստից Ծանձնաժողովին խորհրդակցութեանց արդիւնքը՝ գաւառներէ բերուած որբերու մասին : Մաւիսի յաջորդ թիւով միայն պիտի կրնանք ուրեմն ծանուցանիլ գոյանալիք վերջնական համաձայնութիւնը : Այսօրուան համար կը շատանանք հրատարակել Մեքսիկայի մէկ այցելութեան տպաւորութիւնը աղջկանց Որբանոցին մէջ : Ինչ որ իր մասնաւոր շահեկանութիւնը ունի՝ խնդրին այժմէութեան պատճառով :

Իզմիրեանց կտակի գումարէն 750 ոսկի , որ Բերայի Պարտուց Հատուցման Միտուկը կը գտնուէր 50% տոկոսով , Իզմիրեանց Մըրցանակի Ծանձնաժողովին տնօրինութեամբ վերցուելով անկէ , — որովհետեւ Պարտուց Միտուկը տոկոսներուն ամէնքն ալ 4% ի իշուցած էր , ինչ որ պատուաբեր է անոր մատակարարութեան ու վարկին , — 50% տոկոսաբեր Անաստուրի Երկաթուղւոյ գերմանական եւ Կ. Պոլսոյ Քարապանց ֆրանսական պարտաթուղթ գնուած է :

Երուսաղէմը տարուան պաշտօնակից մը , Փռնց , իր նախորդ շարժումն խմբագրականը նուիրած էր իր յիսուն տարուան պաշտօնակցին՝ Մաւիսի՝ կէս դարու յորելիանը ասոնելու գաղափարին որուն ուժ կուտայ , համակրական տողերով յիշելով Իւթիւճեան Կարապետ էֆ.ի եւ անոր թերթին ունեցած օգտակարութիւնը եւ մատուցած գրական ծառայութիւնները : Ոչ նուազ տարէց պաշտօնակից մը՝ Արեւ. Մաւնուշ ալ , իր փետրվար 15ի թիւին մէջ կը գրէ , արձանագրելէ ետքը այս յորելիանի խորհուրդը . — « Որքան գովելի յղացուած գաղափարը՝ նոյնքան եւ փափագելի է որ ազգային միահամուռ մասնակցութեամբ եւ արժանաւայել շքով մեծարուի գրական բազմաբնիւն գործունէութիւնը հայ լրագրութեան նահապետին՝ որ այնքան արժանի է հանրային յարգանաց եւ երախտագիտութեան » :

Պեքպերեան Վարժարանի հաստատման 25ամեակի Կարգադիր Մասնախումբին անդամ Կարգուած են Տեաք՝ Արշակ Եսայեան , Գրիգոր Ֆէրատեան , Եղուարդ Գարակէօղեան , Երուանդ Գարայեան , Կարապետ Խորասանճեան , Պետրոս Կարապետեան եւ Սիմոն Գայսերեան : Սոյն մասնախումբը կը գումարուի արդէն նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր :

Հարսանեկան նուէր . — Կը լսենք թէ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամները յատկանկատ մտած ումը ունեցեր են ազամանդազարդ ծանրաքին ժամացոյց մը նուիրելու Տիկին Արօինէ Տաղաւարեանի , իբրեւ համակրութեան նշան մը անոր ամուսնոյն՝ Տօքթ. Ն. Տաղաւարեանի մատուցած ծառայութեանց՝ Ազգ. Հիւանդանոցին :

Տ. Բաբգէն Ծ. Վրդ. առաջնորդ ընտրուած է Տրապիզոնի :

Ուսուցիչներու համար հանգստեան թոշակի Միտուկի մը հաստատման գաղափարը , որ տարիներէ ի վեր բազմաթիւ յօգուածներու նիւթ հայթայթեց ազգ. թերթերուն եւ Ուսումն. Խորհուրդն ալ զբաղեցուց ատեն ատեն , այս անգամ վերստին երեւան կելլէ « աշխատելու անկարող ուսուցիչներուն համար Նպաստի Միտուկի » մը հաստատման ձեւին տակ՝ որուն համար կանոնադրի ծրագիր մը պատրաստուելու վրայ է : Երանի՜ թէ այն ծրագիրն ալ իր նախորդներուն բազմին չ'արժանանար :

Պ. Արամ Թաւրանեան , գեղագրութեան վաղեմի եւ բազմաբնիւն ուսուցիչ Խաչիկ էֆ. Թանթաճեանի որդին , իր վկայականը ստանալով մայրաքաղաքս դարձած է Բարիզէն : Երիտասարդ ճարտարապետը 1900ի Արուեստահանդէսին առթիւ եւ ուրիշ պարագաներու մէջ իր արուեստին վերաբերեալ յաջողութիւններ ունեցած էր , եւ այստեղ ալ՝ արդէն իսկ իրեն յանձնուած են կարգ մը ազգ. կալուածներու շինութեան յատակաձեւերու պատրաստութիւնը , որոնց շինութեան գործին ալ ինք պիտի հսկէ :

1902ի Ընդարձակ Օրացոյցին պատրաստութիւնը , Հիւանդանոցի Հոգաբարձութեան որոշմամբ , յանձնուած է Տօքթ. Ն. Տաղաւարեան էֆ.ի , որուն պիտի աշխատակցին

քանի մը գրողներ: Մեր բանասէր աշխատակիցը՝ Յովհաննէս էֆ. Գաղանձեան՝ այս տարուան Ընդարձակ Օրացոյցին նուիրած իր «Մատենախօսական»ին մէջ — Մասիս, թիւ 38 — շատ իրաւամբ կը գրէր թէ «Հիւանդանոցին «Օրացոյցը իր այլազան պարունակութեամբը «պէտք է որ ամէնէն հրապուրիչ, հաճելի ու «օգտակար հատորը ըլլայ ժողովուրդին հաւատարմ, եւ ժողովուրդը՝ Հիւանդանոցին նպատակովը զգացումէն տարբեր չարժանիքէ մըն «ալ պէտք է որ հրապուրուի՝ հաճութեամբ «ու փնտռելով առնելու համար այդ հատորը»:

Չենք կարծեր որ այս դիտողութիւնը յիշեցնելու պէտք ըլլայ Հիւանդանոցի նոր աշխատասիրողներուն, մանաւանդ որ Հոգաբարձութեան կողմէ յանձնարարուած է արդէն՝ նախորդներէն աւելի՝ ճոխ ու պէսպիսութեամբ լեցուն շահեկան գործ մը հանել հրապարակի:

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆԻ ՄԱՂԸ

Ստեփան Ոսկան, որուն մահը ցաւով կը գուժենք մեր կարգին, նոր սերունդին գրեթէ անձանօթ ըլլալու չափ վաղեմի ու մեկուսացած հրապարակագիր մըն էր: Անցեալ ուրախ, կարճատեւ հիւանդութենէ մը վերջ, մեռաւ Իզմիրի մէջ, 75 տարեկան: Քաջ հասակէն ու քաջ ֆրանսագէտ, հաւատարմ կուսակցութեամբ ու կրօնով կը գրէր երկու լեզուներն ալ: 1854ին եւ 1859ին յաջորդաբար հրատարակած է Բարիզի մէջ — ուր Սէնդ Պարպ վարժարանին յաջող շրջանաւարտներէն եղած էր 1845ին — Արեւելք եւ Արեւմուտք կրթամեայ, հանգէտները, զորս հարկադրուեցաւ կարճ միջոցի մը մէջ դադարեցնել, իր դէմ եղած հակառակութիւններէ զգուած, որոնց շարժառիթը՝ աւելորդ է բոլոր իր ջրօրն ու անկեղծ քննադատականները եղած էին: Բարիզէն Սարտենիա անցնելով, ծանօթացաւ հոշակաւոր զիւսանալէն կամ Գալուրի որուն գնահատման ու համակրանքին արժանանալով՝ անոր անձնական քարտուղարը եւ զաւկներուն ալ ուսուցիչը եղաւ: Գալուրի մահէն ետքը Բարիզ վերադարձաւ ուր վերսկսաւ Արեւմուտքը հրատարակել (1864—65): 66ին

սկիզբները իր ծննդավայրին՝ Իզմիրի ազգայիններուն հրաւերով հոն եկաւ եւ վարեց Մեսրոպեան վարժարանին տեսչութիւնը ուսկից սակայն հրաժարեցաւ տարի մը ետքը: Դարձեալ իր դէմ եղած հակառակութեանց պատճառով, եւ այլեւս բոլորովին ձեռք քաշելով հայ գրական, լրագրական եւ ուսուցչական ասպարէզներէն՝ ձեռնարկեց ֆրանսերէն Լա Ռեֆօռմ լրագիրը հրատարակելու զոր շարունակեց 34 տարի, 1867էն 1901:

Յուշարկաւորութիւնը կատարուեց է Տ. Մելքիսեդէկ Սրբազանի նախագահութեամբ, հայ եւ օտարազգի բազմութեան մը ներկայութեանը, եւ Գէորգ էֆ. Պապի դամբանական մը արտասաններէ, զրուստեղով հանգուցելոյն արժանիքը:

Ստեփան Ոսկան կը թողու շատ մը ձեռագիր երկեր:

Ինչպէս Պոլսոյ ազգ. օրաթերթերը, նոյնպէս եւ Իզմիրի Էմքարսիալը ու Անալքթան ցաւագին ու համակրական տողեր նուիրեցին ծերունի հրապարակագրին յիշատակին, մասնաւորապէս վեր առնելով անոր գաղափարի ու սկզբունքի տէր գրագէտ մը ըլլալը, որոնց կը զոհէր իր անձնական շահերը: Անոր համար է որ դժբաղդ ու կարօտ վիճակի մէջ մեռաւ:

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ կամ Տաբեբ առեւտրական գիտութեան պարբերականն է. տետրը հրատարակուեցաւ մարտ 1ին, իր շահեկան ու օգտաշատ բովանդակութեանց շարքովը: Ուրախ ենք որ Սիմօն էֆ. Չէօմէլ քճեանի այս աշխատութիւնը հետզհետէ կը զեռահատուի ու ծաւալում կը գտնէ, եւ մեր կողմէ ալ ջերմապէս կը յանձնարարենք անոր ընթերցումը: Այս է. տետրին վերջը կցուած է առաջին մասը Առեւտրական Բաւարանին որուն ամբողջութիւնը տեսակին մէջ բոլորովին նոր գործ մը պիտի կազմէ:

ՖՕՆՈԿԻՍԻ անուն շարժական տետրի մը հրատարակման ձեռնարկած է ծանօթ գաւազնագիր Վահան էֆ. Փափագեան: Յաջորդութիւն կը մտադրենք:

Արժօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսերի եօզուլ, թիւ 27

ԹՂԹԱՎԱՃԱՌ

Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Պոլիս, Սուլթան-Համամ, Բաղնիքին կից քիւ 18

Տէր-Ներսէսեան Թղթավաճառատունը՝ իր նախկին անզը վերահաստատուած՝ դրամատանց, վաճառատանց, գրատնեակի եւ դպրոցներու վերաբերեալ ճոխ ու ընտիր ապրանքներ բերել տուած է։ Գլխաւորաբար հոգ կը տանի Տպագրութեան (փոխանակագիր, շրջաբերական, քարթ ար վիզիթ, հարսանեաց հրաւիրագիր եւլն. եւլն.) եւ կազմի վերաբերեալ գործերու, եւ կը ստանձնէ այս կարգի ամէն յանձնարարութիւններ զորս կը կատարէ փութով, խնամով եւ խիստ դիւրամտաչելի պայմաններով։

Ամէն անոնք որ հաճին անգամ մը պատուել Տէր-Ներսէսեան վաճառատունը՝ մեծապէս գոհ պիտի մնան ապրանքներու ճոխութենէն ու ընտիր հանգամանքներէն, մանաւանդ յանձնարարութեանց փութով կատարումէն եւ այն ուղղամտութենէն որ վաճառատան կէտ նպատակն է։

Դաւառներէ եկած յանձնարարութիւնները փութով կը կատարուին։

3—10

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաւիաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՔ ԷՏՈՒԸՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալմնի խան, Կ. Պոլիս։

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

ՏՔԹ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ – ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396, ՄԵՍ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ, 396

(Եաննի գարեջրատան վրայի յարկը, ճիշդ Զրպուհեանց դէմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենաստիկ ցաւած ախտաները մեկ անգամեւ կը բացեն։ ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ։

Նորահար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական ախտաներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դիմքի ձեւաւորութիւն ըստ արիքի, ծաւոյութիւն եւ ազատ արձանագործութիւն երաշխաւորուած։

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն։

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (մինչեւ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (մինչեւ կես զիշեր) հիւանդ կ'ընդունին։

Ծանօթ. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ԶՈՒՆԻՆՔ.

Հրատարակուեցաւ

ԲՐՈՖ. ՀԵՌՄԱՆ ԳԼԵՆՔԷ

ԿԻՆՆ ԻԲՐԵՒ ՕՐԻՈՐԴ

Թարգմանութիւն Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆԻ 430 էջ

Բնախօս-բժիշկը չափահաս օրիորդաց ժիզիքական եւ բարոյական զարգացումը ինքնակրթութեամբ կարելի ընելու համար պատրաստած է այս գիրքը, որ իր հայերէնի թարգմանութեամբը կոչուած է զգալի պակաս մը լեցնել մեր գրական հրապարակին բնախօսա-առողջապահական աշխատանքներէն:

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ Է ԱՅՍ ԳԻՐՔԸ ԱՄԷՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ:

Կեդրոնացեղին է՝

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Վաճառատունը, Ֆինանսներ, Կ. Պոլիս

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց յոյր գրադաճողներուն քով:

Թղթակազմ 10, Լաթակազմ 15, Ոսկեզօծ 20 դամեկան:

Կ
Ի
Պ
Ն
Շ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ

ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ

Մ. ՏԷՐ - ԴԱԻԻԹԵԱՆ

Կ
Ի
Պ
Ն
Շ

Թիւ 21, Ղալաթիա, Վոյվոսա փողոց, Գաղղիական նամակատան դիմ

Խիստ աժան գիներով կը ծախէ Ֆլանէլ, քիտան եւ բիքէ շապիկներ, ժողկապ, օձիք, թեւնոց, կոճակ (ոսկեզօծեալ ու պարզ), գուլպայ, թաշկինակ, զմեղի, խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց ամենաընտիր տեսակներ:

Միշտ խնամով ու զիւրամատչելի գիներով կը պատրաստէ նաեւ չափու վրայ ամէն տեսակ շապիկ, գիշերազգեստ, օձիք, թեւնոց, ու կը կատարէ ներքին ճերմակեղինաց յանձնարարութիւններ:

Հանրածանօթ Մ. ՏԷՐ ԴԱԻԻԹԵԱՆ շապիկի գործարանը նորաձեւութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան ու գիներու տարապայման աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի տուն մըն է:

12—15



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսան հին տեղը

Ընդհ. Բնակիչ

Ընդհ. Գործակալ

Ա. ՀԻԻՐՄԻԻՉ

ԹԷՆՏՈՐ ՌԷԲԷԷՆ